ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXVIII, № 2, 1975

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ՍՏԵՓԱՆ ՄԻՐՈՆԻ ԽՆԶՈՐՅԱՆ

Լրացավ ՍՍՀՄ-ում և արտասահմանում ճանաչում գտած վաստակաշատ միջատաբան-բզեզագետ Ստեփան Միրոնի Խնձորյանի (Յաբլոկով-Խնձորյանի) 70 տարին։ Յուրովի է դասավորվել Ստեփան Միրոնի Խնձորյանի գիտական գործունեությունը։ Ստանալով բարձրագույն պոլիտեխնիկ կրթություն Փարիզում, երկար տարիներ ճարտարապետության գծով աշխատել է ֆրանսիական տար-

բեր կազմակերպություններում։ 1947 թվին հայրենադարձվում է Սովետական Հայաստան և շարունակում զբաղվել ճարտարապետությամբ (ալյումինի գործարան, Շինանյութերի գ/հ ինստիտուտ և այլն)։ Սակայն նրա իսկական կոչումը միջատաբանությունն էր։ Մանկուց հավաքել է Հյուսիսային Կովկասում տարածված բզեզներ։ Փարիզում սովորելու տարիներին և հետագայում շրջել է Եվրոպական երկրներում կազմելով բզեզների հավաքածու։ Գործուն մասնակցել է Սենի ավազանի բզեզագետների (կոլեոպտերոլոգների) ընկերության աշխատանքներին, եղել է նրա փոխնախագահը և նախագահը։ Սակայն Սովետական Հայաստան վերադառնալուց հետո միայն հնարավորություն է ստանում ուժերը ամբողջովին նվիրելու սիրած մասնագիտության՝ միջատաբանության։ Մասնակցել է Հայաստանի անտառների վնասատու էնտոմոֆաունան ուսումնասիրող արշավախմբին, աշխատել է բուսաբանական այգում և վերջապես ընբ

դունվել է Կենդանաբանության ինստիտուտ, որպես կրտսեր և ապա՝ ավագ գիտական աշխատող, որտեղ և աշխատում է մինչև այժմ։

1954 թվին՝ Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայկ. ՍՍՀ կաղնու կարծրաթևերը», իսկ 1964 թ. Երևանում դոկտորական դիսերտացիա՝ «Հայկ. ՍՍՀ գնայուկ բզեզները»։ Վերջինս հանդիսանում է այդ խմբի բզեզների առավել լրիվ ամփոփագիրը։ Ս. Մ. Խնձորյանի գրչին են պատկանում 120-ից ավելի հրատարակված աշխատություններ, որոնցից հատկապես արժի նշել «Հայաստանի կարծրաթևերի գենեզիսի վերականգնման փորձ» (1961), «Հայկ. ՍՍՀ թերթաբեղերը» (1967) և այլն։ Նրա աշխատությունները լուրջ ներդրում են Հայաստանի կարծրաթևերի ուսումնասիրման բնագավառում։ Աշխատություններից շատերը նվիրված են բզեզների էկոլոգիային, տարածվածությանը և կենսաբանության ընդհանուր հարցերին։ «Բզեզների դերը ծաղիկների փոշոտման գործում» (1954), «Զոնայականության դերը էվոլյուցիոն պրոցեսում» (1961), «Էվոլյուցիայի ռիթմիկան» (1963), «Տեսակի մասին» (1968) և մի շարք այլ աշխատություններ միջատաբանության լուրջ տեսական ակնարկներ են։ Տիրապետելով ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուների, նա հաճախ տպագրվում է արտասահմանյան միջատաբանական պարբերականներում։

Նրա աշխատություններից շատերը ունեն գործնական արժեք։ «Հայկ. ՍՍՀ կաղնու ականող երկարակնճիթները», «Հայկ. ՍՍՀ անտառներին վնասող որոշ միջատների դինամիկայի առանձնահատկությունները», «Հայկ. ՍՍՀ-ի գնայուկ բզեզները և նրանց գյուղատնտեսական նշանակությունը» աշխատությունները օգտագործվում են բույսերի պաշտպանության բնագավառի աշխատողների կողմից։ «Գյուղատնտեսության, անտառի և պահեստային տնտեսության վնասատուները» տեղեկագրքի (որը տպագրվում է հայերեն) համահեղինակն է։

Ներկայումս տպագրվում է նրա Հայաստանի ֆաունայի շարքից— «Գնայուկ բզեզները» մենագրությունը, 20-ից ավելի աշխատություններ սպասում են տպագրության։

Ստեփան Միրոնովիչը մեծ աշխատավոր բնասեր է։ Հայաստանում գրտնվելու ժամանակամիջոցում շրջագայել է Կարպատներում, Ղրիմում, Կովկասում, Միջին Ասիայում, Ղազախստանում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում։ Հայաստանի բնությունը դիտի գերազանց։ Նրա անձնական հավաքածուն բովանդակում է 11.000 ավելի տեսակի բզեզներ, նրա կողմից հայտնաբերվել են և նկարագրվել գիտության համար 213 նոր տեսակի բզեզ, իսկ Հայաստանի համար առաջին անգամ նշված բզեզների թիվը 2500 տեսակից ավելի է։ Մեծ օգնություն է ցույց տալիս Կենդանաբանության ինստիտուտի միջատների հավաքածուի հարստացմանը։ Դրան մեծապես նպաստում է նրա մշտական կապերը տարբեր երկրների ճանաչված բզեզագետների հետ։

Ս. Մ. Խնձորյանը մեծ էրուդիցիայի տեր, բազմակողմանի պատրաստված միջատաբան գիտնական է։ Մշտապես նպաստում է ասպիրանտների և երիտասարդ կենդանաբանների պատրաստման գործին։ Նրա մոտ հաճախ կարելի է տեսնել խորհրդի եկած գիտնականների, դասախոսների, գյուղատնտեսության և անտառի աշխատողների։

Կենդանաբանության ինստիտուտի և Հայկ. ՍՍՀ ԳԱ Կենսաբանական գիտությունների բաժանմունքի Միացյալ գիտական խորհուրդների անդամ է։ Լու-

սավորության աշխատավորների հանրապետական խորհրդի կողմից 1970 թվականին պարգևատրվել է «Պատվո գրով»։

Ստեփան Միրոնովիչը լի է երիտասարդական ավյունով և շարունակում է հարստացնել հայրենական կենդանաբանական գիտությունը նոր հայտնագործություններով։

Ցանկանք վաստակաշատ գիտնական-միջատաբանին քաջառողջություն, ակտիվ գործունեության երկար տարիներ և ստեղծագործական նոր նվաճումներ։

Գ. Մ. ՄԱՐՋԱՆՅԱՆ